

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 40 ՏԱՐՈՒՄ

Բ. Հ. ՎԵՐԴՅԱՆ, Վ. Ա. ՔՈՍՅԱՆ

Մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը հայ լեզվաբանությունը զարգանում էր մեծ մասամբ բուն հայրենիքից դուրս, օտար ավերում և հանդիպում էր լուրջ խոչընդոտների ու դժվարությունների:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը մեր ժողովրդին նյութական կյանքի և հոգևոր ուժերի զարգացման աներևակայելի հնարավորություններ տվեց: 1921 թվականին Երևանում հիմնադրվեց մեր բազմադարյան պատմության մեջ առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Պետական համալսարանը, որը դարձավ հայ գիտական մտքի, մասնավորապես հայագիտության հավարագրող կենտրոն: Երևանի Պետական համալսարանի հիմնադիրները դարձան մեր ժամանակի խոշորագույն հայ գիտնականներ Հր. Աճառյանը, Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Ա. Տերտերյանը, Գր. Ղափանցյանը և ուրիշներ:

Գիտության այլ ճյուղերի հետ մեկտեղ հայ լեզվաբանության զարգացմանը մեծապես նպաստեցին նաև մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնադրումը և 1935 թ. ՍՍՍՐ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի ստեղծումը, որը 1943 թ. վերածվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի՝ իր բազմաթիվ ինստիտուտներով, սեկտորներով ու լաբորատորիաներով: Հայ լեզվաբանական մտքի կենտրոնը դարձավ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտը, որի շուրջը հավաքվեցին մեր ռեսպուբլիկայի նշանավոր լեզվաբանները: Ինստիտուտն այժմ ունի մի շարք սեկտորներ, որտեղ բեղմնավոր աշխատանք է կատարվում հայոց լեզվի պատմության, ընդհանուր լեզվաբանության, արդի հայերենի տեսության, բարբառագիտության և բառարանագրության ուղղությամբ:

Հայոց լեզվի ամբիոններ ստեղծվեցին Երևանի Պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտում, Լենինականի Մ. Նալբանդյանի անվան և Երևանի Հեռակա մանկավարժական ինստիտուտներում: Հայ բազմավաստակ լեզվաբաններ Հր. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Սա. Մալխասյանի և Գր. Ղափանցյանի անունների կողքին հանդես եկան նոր անուններ, որոնք լեզվի գիտությունը հարստացրին բարձրարժեք աշխատություններով: Իրենց ուսումնասիրություններով հասարակությանը ծանոթ են ակադեմիկոս Ա. Ղարիբյանը, Հայկ. ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամներ Գ. Սևակը և Էդ. Աղայանը, քրոֆեսորներ Գ. Զահուկյանը, Ս. Ղազարյանը, Ա. Մուրվալյանը, դոցենտներ Ա. Աբրահամյանը, Վ. Առաքելյանը և ուրիշներ: Աճել է երիտասարդ, շնորհալի լեզվաբանների նոր սերունդ, որոնցից առանձնապես արժանի են հիշատակման Հ. Բարսեղյանը, Մ. Ասատրյանը, Ս. Աբրահամյանը, Ալ. Մարգարյանը և շատ ուրիշներ: Վերջին տասնամյակում հրատարակվել են սովետահայ լեզվաբանների բազմաթիվ մենագրություններ, հոդվածներ ու ժողովածուներ, որոնք խոշոր ավանդ են մեծ տրադիցիաներ ունեցող հայ լեզվաբանության մեջ: Այդ աշխատությունները լուծում են հայոց լեզվի պատմության, ընդհանուր լեզվաբանության, արդի հայերենի տեսության, բարբառագիտության և այլ ռեալիզմների բազմաթիվ հարցեր: Մի հոգվածում անհնար է հանգամանորեն խոսել այդ բոլորի մասին: Փորձենք գոնե համառոտակի կանգ առնել դրանցից հիմնականների վրա՝ ըստ լեզվի գիտության առանձին բաժինների:

* * *

Աննախընթաց զարգացում ունեցավ հայագիտությունը հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ասպարեզում:

Հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրությունն սկսվել է, ինչպես հայտնի է, XIX դարի առաջին կեսում Եվրոպացի և հայ մի շարք լեզվաբանների կողմից: Այս ասպարեզում

մեծ ծառայություն են մատուցել Պետերմանը, Վինդիշմանը, Ֆր. Մյուլլերը, Պոլ դը Լագարդը, Հյուբշմանը, Ս. Տերվիշյանը, Ք. Պատկանյանը, Ս. Բուդգեն, Ա. Մեյեն, Հ. Պեդերսոնը և ուրիշներ:

Սակայն Սովետական իշխանության պայմաններում միայն լայն հորիզոններ բացվեցին հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության համար: Միայն Սովետական Հայաստանում հնարավոր դարձավ հրատարակելու այնպիսի կապիտալ գործ, ինչպիսին բազմալատակ հայագետ, հնդեվրոպական լեզվաբանության խոշոր ներկայացուցիչ, հանգուցյալ ակադեմիկոս Հ. Աճառյանի 7 հատորանոց «Հայերեն արմատական բառարանն» է (1926—1935): Այս բառարանը, որի ստեղծմանը մեծ հայագետը ձեռնարկել էր դեռևս աշակերտական տարիներից, ամփոփում է հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրության ասպարեզում մինչև 1930-ական թվականները կատարված ողջ հետազոտությունների արդյունքները, որոնց մեջ պատկառելի տեղ են գրավում հենց իր՝ Հ. Աճառյանի աշխատությունները: «Արմատական բառարանը» պարունակում է շուրջ 11000 հայերեն արմատների և արմատական բառերի վերաբերյալ եղած բոլոր ստուգաբանությունները: Տիտանական այդ գործի մասին պատկերացում կազմելու համար բավական է ասել, որ յուրաքանչյուր արմատի մասին եղած բառահոգվածք բաղկացած է հինգ բաժնից, որոնցից ամեն մեկը առանձին վերցրած մի լուրջ հետազոտություն է: Պրոֆ. Աճառյանը հայերեն արմատները բնութագրում է նրանց ծագումնաբանական, ստուգաբանական, բառակազմական, ինչպես նաև բարրառային արտացոլման տեսակետից: Բառահոգվածի հինգ բաժիններից ամեն մեկը (բառագիտություն, ստուգաբանություն, ստուգաբանությունների պատմություն, բառի բարրառային ձևեր, հայերենից այլ լեզուներ կատարված փոխառություն) արդյունք է հեղինակի երկարամյա մանրակրկիտ հետազոտության: «Արմատական բառարանը» գրելու համար պրոֆ. Հ. Աճառյանը ծալրից ծալր կարդացել է ողջ հայ գրականությունը, ինչպես նաև ուսումնասիրել է յուրաքանչյուր բառի շուրջը եղած բոլոր քննությունները: Նման աշխատություն այլ պայմաններում կարող էին ստեղծել հարյուրավոր գիտնականներ մի քանի տասնյակ տարիների քրտնաջան աշխատանքի շնորհիվ միայն:

Սակայն «Արմատական բառարանի» արժեքը չի սահմանափակվում միայն սրանով: Այդտեղ Հ. Աճառյանի կողմից տրված է հարյուրների հասնող հնդեվրոպական արմատների ստուգաբանություն: Պրոֆ. Աճառյանը միաժամանակ վերանայել է Հյուբշմանի, Մեյեի և ուրիշների կողմից տրված հարյուրավոր բառերի ստուգաբանություններ: «Արմատական բառարանի» և Հ. Աճառյանի հետագա ուսումնասիրությունների շնորհիվ հնարավոր դարձավ խորապես հիմնավորել հայերենի հնդեվրոպական բնույթը, մի պրոբլեմ, որով երկար ժամանակ զբաղվում էր եվրոպական, ռուս և հայ լեզվաբանություն: Այս պատճառով էլ պատահական չէ այն մեծ գնահատականը, որ տվել է «Արմատական բառարանին» հնդեվրոպական լեզվաբանության սյուներից մեկը՝ Ա. Մեյեն:

«Ոչ մի լեզվի համար չկա այսքան ճոխ, այսքան կատարյալ ստուգաբանական բառարան: Հպարտ եմ, որ ունեցել եմ պարոն Աճառյանին երկար տարիներ իմ աշակերտների թվում, նա մեկն է նրանցից, որոնք պատիվ չեն բերել այն դպրոցին, որից անցել են»:

Հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրության արդյունքները հետագայում Հ. Աճառյանն ամփոփեց իր «Հայոց լեզվի պատմություն» երկհատոր աշխատության մեջ (1-ին հատորը լույս է տեսել 1940 թ., 2-րդ հատորը՝ 1951 թ.):

Ամենայն մանրամասնությամբ բննելով հայոց լեզվի բառային կազմը, քերականական կառուցվածքը և լեզվական հարուստ փաստերի հիման վրա ճշգրտելով հայերենի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում (սլավոնական, հունական և իրանական լեզուների միջև), պրոֆ. Հ. Աճառյանը մանրամասն բննում է հայերենի և հարևան լեզուների փոխհարաբերությունը, պարսկերենից, հունարենից, եբրայեցերենից, ասորերենից, վրացերենից, թուրքերենից և եվրոպական լեզուներից կատարած փոխառությունները հայերենում, ինչպես նաև հայերենից հարևան լեզուներին անցած բառերը: Սգտագործելով հայ հին և միջնադարյան հարուստ գրականության տվյալները, պրոֆ. Աճառյանը ցույց է տալիս այն ուղին, որով ընթացել է հայոց լեզվի պատմական զարգացումը մինչև մեր օրերը: Եւ հայերենի պատմության առաջին գիտական ամենախոր ուսումնասիրությունն է: «Հայոց լեզվի պատմություն» տեսական հանրագումարն է այն բոլոր ուսումնասիրությունների, որոնք կատարվել են պատմահամեմատական մեթոդով հնդեվրոպական լեզվաբանության հիմնադրումից մինչև 1940-ական թվականները: Հեղինակը բազմաթիվ փաստերի հետազոտության շնորհիվ եկել է այն եզրակացության, որ հնդեվրոպական հայերենը, պատմական զարգացման ընթացքում չլիման մեջ լինելով հարևան ժողովուրդների լեզուների հետ, ժամանակի ընթացքում փոխառությունների ճանապարհով կրել է

ներանց ազդեցությունը, սակայն մնացել է իրեն հնդեվրոպական լեզու։ Այս աշխատության մեջ բնական է նաև գրաբարի, միջին հայերենի, աշխարհարարի պատմական փոխանցումները, հայերեն բարբառների ծագման, ինչպես նաև դրական լեզվի զարգացման ուղիների կարևոր պոփոքները։

Հայոց լեզվի, հայ բանասիրության և հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար չափազանց արժեքավոր է պրոֆ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը» (1-ին հ.՝ 1942 թ., 2-րդ հ.՝ 1944 թ., 3-րդ հ.՝ 1946 թ., 4-րդ հ.՝ 1948 թ.), որը յուրահատուկ հանրագիտարան է, իր նմանը չունենալով հայ մշակույթի պատմության մեջ։

Հնդինական ուսումնասիրելով ողջ հայ մատենագրությունը, տվել է ոչ միայն անունների կազմությունն ու ծագումը, այլև բաղել է յուրաքանչյուր անվան վերաբերյալ եղած բոլոր տեղեկությունները, բոլոր անձանց կենսագրությունն ու գործունեությանը վերաբերող տվյալները։

Սովետահայ լեզվաբանության (և ողջ սովետական լեզվաբանության) ամենամեծ նվաճումներից մեկը, սակայն, մնում է պրոֆ. Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի (համեմատությամբ 562 լեզուների)» 10 հատորանոց մոնումենտալ աշխատությունը, որից հրատարակված է առայժմ 5 հատոր (1-ին հատոր—Ածական, թվական—1952 թ. 2-րդ հ.—Դերանուն—1954 թ., Ներածություն, որը բաղկացած է լեզվաբանության ներածությունից և լեզուների դասակարգումից—1955 թ., 3-րդ հ.—Գոյական—1957 թ., 4-րդ հ.—Բայ—1959 թ.)։ Սա հնդինակի լեզվաբանական բոլոր աշխատությունների հանրագումարն է և միաժամանակ համաշխարհային լեզվաբանության նվաճումների ամփոփումը այդ բնագավառում։

Գծվար է գնահատել այդ աշխատությունը միայն հայոց լեզվի պատմության ուսումնասիրության դիրքերից, բանի որ այն ներկայացնում է ոչ միայն հայոց լեզվի պատմությունը, այլև ընդգրկված բոլոր լեզուների քերականական կառուցվածքի նկարագրությունը։ Աշխատության ամեն մի հատորը (բացի «Ներածությունից») պարունակում է ընդհանուր լեզվաբանության, հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության և հայոց լեզվի պատմահամեմատական քերականության տարբեր բաժինների խոր ու բազմակողմանի քննությունը։ Պրոֆ. Հ. Աճառյանը քննության է առել լեզվի յուրաքանչյուր բաժին աշխարհի 562 լեզվի համադրման ու համեմատության միջոցով, ապա տվել է լեզվական ամեն մի երևույթի պատմահամեմատական քննությունը հնդեվրոպական լեզուների մեջ և, ի վերջո, անդրադարձել է հայոց լեզվի ու նրա բարբառների ամենամանրակրկիտ քննությանը։ Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ «Լիակատար քերականություն» լեզվաբանական ամենամեծ հանրագիտարանն է։

Հայոց լեզվի ծագման, նրա բնույթի և հարևան լեզուների հետ ունեցած կապերի, ինչպես նաև հայ էթնոսի ծագման ուսումնասիրությանն են նվիրված հանգուցյալ ակադեմիկոս Գ. Ղափանցյանի բազմաթիվ աշխատությունները («Chetto—armeniaca»—1931—1933 թթ., «Ուրարտուի պատմություն»—1940 թ., «Хеттские боги у армян»—1940 թ., «Историко-лингвистическое значение топонимики древней Армении»—1940 թ., «Хайаса—колыбель армян»—1942 թ., «Ասորա-բաբելական բառեր հայերենում»—1945 թ., «К происхождению армянского языка»—1946 թ. և այլն)։

Դրանցում պրոֆ. Գ. Ղափանցյանը հայերեն բազմաթիվ բառերի, մասնավորապես տեղանունների, ինչպես նաև ցեղային ու տոհմական անունների պատմա-համեմատական քննության միջոցով ցույց է տվել հին փոքրասիական լեզուների՝ ուրարտերենի, խեթերենի, խուրտերենի և հայերենի ընդհանրությունները, ինչպես նաև այդ լեզուներից հայերենում պահպանված փոխառությունները։ Մասնավորապես «Հայաստան հայերի բնօրրան» աշխատության մեջ պրոֆ. Ղափանցյանը լեզվաբանական վերլուծությունների, նյութական կուլտուրայի հուշարձանների, ինչպես նաև հին փոքրասիական ժողովուրդների պատմության փաստերի մանրակրկիտ հետազոտությամբ վալիս է այն եզրակացության, որ հայ ժողովուրդն առաջացել է Հայաստանի սնիկների՝ խեթերի, ուրարտացիների և արմենների խաչավորման հետևանքով, և հայերենը Հայաստանի լեզուն է՝ հետագայում բազմազան խաչավորումների և ազդեցությունների ենթարկված։

Ջրալի հաջողությունների է հասել նաև ուրարտագիտությունը սովետական տարիներին։ Հրատարակված են ակադ. Գ. Ղափանցյանի «Ուրարտուի պատմությունը» ընդարձակ աշխատությունը (1940), Մ. Իսրայելյանի, Ն. Հարությունյանի և մյուսների հոդվածները։

Սովետահայ լեզվաբանության զարգացմանը մեծ չափով խանգարեց Ն. Մառի «Լեզվի նոր ուսմունքը», որի ափրապետության ընթացքում լեզվաբանական կադրերի ուղարկությունը շեղվել էր հայոց լեզվի պատմության ուսումնասիրությունից։ 1950 թ. դիսկուսիայից հետո աննախ-

ընթաց վերելք ապրեց ինչպես սովետական լեզվաբանությունը, այնպես էլ հայագիտությունը։ Մեր լեզվաբանները նոր ուժով ձեռնամուխ եղան հայերենի բազմադարյան պատմության ուսումնասիրությանը։ Վերջին 10 տարվա ընթացքում վերանայվեցին ոչ միայն հայոց լեզվի տեսություն, այլև պատմության հիմնական դրույթները։ Իրար ետևից լույս տեսան հայերենի ծագման, ու պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ, ինչպես օրինակ՝ գոց. Ա. Արրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (1953), պրոֆ. Ս. Ղազարյանի «Հայոց լեզվի համառոտ պատմություն» (1954), բանասիրական դիտ. դոկտոր Ա. Մուրվալյանի «Հայոց լեզվի բառային կազմը» (1955), պրոֆ. Գ. Զահուկյանի «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (1959), «Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը» (Սրեանի համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 57) և այլն։

Դոցենտ Ա. Արրահամյանի նշված աշխատությունը սպասելի ուսումնասիրություն է հայերենի պատմական քերականության կարևոր բնագավառներից մեկի վերաբերյալ գրված լեզվաբանական գիտության արդի նվաճումների մակարդակով։

Պրոֆ. Ս. Ղազարյանի «Հայոց լեզվի համառոտ պատմությունը» լեզվաբանական դիսկուսիայից հետո առաջին փորձն է շարադրելու հայերենի պատմական զարգացումը գրավոր շրջանից սկսած։ Հեղինակն աշխատել է համառոտակի դժել այն ուղին, որն անցել է հայերենը V դարից մինչև մեր օրերը, ցույց տալ որակական այն փոփոխությունները, որոնք գրաբարը վերածել են միջին հայերենի, և վերջինս էլ՝ աշխարհաբարի։

Ա. Մուրվալյանի «Հայոց լեզվի բառային կազմը» գիրքը բառային կազմի պատմական տեղաշարժերի ու զարգացման ուրվագիծն է։ Պրոֆ. Գ. Զահուկյանի ուսումնասիրությունն արմերավոր է ոչ միայն նրանով, որ հայերեն լեզվով գրված առաջին աշխատությունն է՝ նվիրված հայերենի հոլովման համակարգի պատմահամեմատական ուսումնասիրությանը, այլև նրանով, որ օգտագործված են արդի լեզվաբանության նվաճումները։ Հեղինակն այդտեղ աշխատել է պարզել հնդեվրոպական հոլովման սիստեմից գրաբարի հոլովմանն անցած ուղին՝ ելնելով գրաբարի և ազգակից լեզուների հոլովման օրինաչափություններից։ Գրքում առաջ են բաշված և լուծված հնդեվրոպական լեզվաբանությանը վերաբերող մի շարք հարցեր։

Գ. Զահուկյանը միակողմանիորեն չի մոտեցել հին հայերենի քերականական ձևերի քննությանը և դրանք բոլորը ուղղակիորեն բխեցրել հնդեվրոպական հիմք լեզվից։ Անունների հոլովման օրինաչափությունների մանրակրկիտ ուսումնասիրության միջոցով նա աշխատել է ցույց տալ, մի կողմից, հոլովման հնդեվրոպական արխաիկ, մյուս կողմից, հայերենի ինքնուրույն զարգացման շնորհիվ ձեռք բերած ձևերը, ինչպես նաև ազգակից հնդեվրոպական և ոչ ազգակից հարևան լեզուներից կատարած փոխառությունների միջոցով առաջացած քերականական ձևերը։ Հայոց լեզվի պատմության շրջանառաժանմանը նվիրված իր աշխատության մեջ պրոֆ. Զահուկյանը աշխատել է քննել հայերենի պատմական զարգացման պրոցեսում որակական անցումների պատմական հաջորդականության աստիճանները՝ կապված մի կողմից մեր ժողովրդի պատմության, մյուս կողմից գրական լեզուների ու բարբառների փոխազդեցությունների հետ։

Սովետահայ լեզվաբանների կողմից ուսումնասիրված է ոչ միայն հայոց լեզվի ծագումնաբանական պատմության հնագույն շրջանը, այլև ժամանակակից գրական հայերենի կազմավորման ու զարգացման պատմությունը։ Այդ հարցերին են նվիրված Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ պրոֆ. Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի համառոտ պատմությունը» (1948), պրոֆ. Գ. Զահուկյանի «Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը XVIII—XIX դարերում» (ձեռագիր) և այլ աշխատություններ։ Մասնավորապես փորձեր են արված տալու ոչ միայն ընդհանուր հայերենի, այլև աշխարհաբարի պատմական զարգացման շրջանառաժանումները, թեև անհրաժեշտ է նշել, որ այդ հարցում դեռևս վերջնական հզրակացություն չալ հնարավոր չի եղել։ Անշուշտ, գիտական տեսակետից կարևոր է ընդհանուր ճանաչում գտած այն դրույթը, որ ժամանակակից գրական լեզուն աշխարհաբարի զարգացման նոր, բարձր աստիճանն է, իսկ աշխարհաբարն առաջացել է ոչ թե XIX դարում, այլ սկսել է կազմավորվել շատ ավելի վաղ շրջանից՝ դեռևս XV—XVII դարերից։

Մի շարք լեզվաբանների կողմից հանգամանալից ուսումնասիրության են ենթարկվել գրաբարի և XIX դարի կեսերի գրական լեզվի զարգացման հարցերը։ Լույս են տեսել բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մարգարյանի «Մ. Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը» (1957), «Խաչատուր Աբովյանը և աշխարհաբարը» (1958), և Սարգսյանի «Микаел Налбандян и вопросы языка» (1955) աշխատությունները։

Սովետական շրջանում ստեղծվել են նաև քրաբարի քերականության լավագույն ձեռնարկներ ու դասագրքեր։ Դրանցից են պրոֆ. Հ. Աճառյանի «Գրաբարի ուսուցիչ» (1936), գոթ-

Ա. Արրահամյանի «Գրաբարի ձեռնարկ» (1952, 1957), Ս. Ղազարյանի «Գրաբարի դասագիրք» (1951), Ա. Առաքելյանի «Գրաբարի դասագիրք» (1944), Վ. Առաքելյանի «Գրաբարի հոլովումը և խոնարհումը» (Համառոտ դասընթաց, 1945)։

Սովետական Հայաստանում բուռն զարգացում ապրեց հայագիտության՝ անցյալում միայն որոշ քայլեր կատարած այնպիսի ճյուղ, ինչպիսին Հայ բարբառագիտությունն է։ Այս գիտության հիմնադիրը նույնպես բազմավաստակ պրոֆ. Հ. Աճառյանն է, որի «Հայ բարբառների դասակարգումը» (Ֆրանսերեն լեզվով, Փարիզ, 1909) և «Հայ բարբառագիտություն» (Ն. Նախիջևան, 1911) աշխատությունները գիտական բարբառագիտության սկզբունքների շարույրանքն են հանդիսանում։ Պրոֆ. Աճառյանը տալով հայերեն 31 բարբառի նկարագրությունն ու գիտական վերլուծությունը, մշակելով բարբառների ձևաբանական դասակարգման հիմունքները, միաժամանակ զբաղվում էր առանձին բարբառների հետազոտությամբ։ Սովետական շրջանում լույս են տեսել պրոֆ. Հ. Աճառյանի առանձին բարբառներին նվիրված մենագրությունները՝ «Քննություն Նոր Նախիջևանի բարբառի» (1925), «Քննություն Մարաղայի բարբառի» (1930), «Քննություն Ագուլիսի բարբառի» (1935), «Քննություն Նոր-Ջուղայի բարբառի» (1940), «Քննություն Պոլսահայ բարբառի» (1941), «Քննություն Համշենի բարբառի» (1947), «Քննություն Առտիալի բարբառի» (1953), «Քննություն Վանի բարբառի» (1953)։

Պրոֆ. Հ. Աճառյանն աճեցրել է բարբառագետների մի փայլուն սերունդ՝ Հայկական ՍՍԽ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Ղարիբյան, Հայկական ՍՍԽ ԳԱ թղթակից-անդամ էդ. Աղայան և ուրիշներ։ Զափազանց մեծ են պրոֆ. Ա. Ղարիբյանի ծառայությունները Հայ բարբառագիտության զարգացման գործում։ Հայ բարբառների պրանցմանը, գիտական նկարագրությանը և հետազոտությանն են նվիրված պրոֆ. Ա. Ղարիբյանի քսանից ավելի մեծածառ աշխատություններ։

Պրոֆ. Ա. Ղարիբյանը, շարունակելով իր ուսուցչի տրագիցիաները, զարգացման նոր աստիճանի հասցրեց Հայ բարբառների գիտական ուսումնասիրությունը։ 1939 թ. լույս րնծայած «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» (Պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. 11) աշխատությամբ նա ցույց տվեց, որ հայ բարբառներն ունեն ոչ թե երեք, այլ չորս ճյուղ («Ում», «Կ», «Լ», «Ս»)։

Նոր հայտնաբերված «Ս» ճյուղը բաղկացած էր Մեղրու, Ուրմիայի, Կարճևանի, Հաղրուի, Արգվիի և Ղարաղաղի բարբառներից։ Նրա բարբառագիտական ուսումնասիրությունների արդյունքները պարբերաբար հրապարակվել են «Համառոտություն հայ բարբառագիտության» (1941), «Հայ բարբառագիտություն» (1953), «Հայերեն նորահայտ բարբառների մի նոր խումբ» (1958) և այլ աշխատություններում։

Բարբառագիտության ասպարեզում պրոֆ. Ղարիբյանի ամենամեծ ծառայությունը ամենից առաջ շուրջ 20 նոր բարբառների հայտնաբերումն ու նկարագրությունն է։ Իր գիտական գործունեության ընթացքում նա անդուլ կերպով որոնել ու գտել է նորանոր բարբառներ։ Դժվար է գերազնահատել էնտուզիաստ գիտնականի այդ պրպտումների նշանակությունը, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ իմպերիալիստական առաջին պատերազմից և հայկական կոստորածներից հետո ողջ արևմտահայությունը ցրվեց աշխարհով մեկ։ Այդ պայմաններում համապատասխան բարբառի ներկայացուցիչների քիչ թե շատ մեծ խումբ գտնելը կապված էր անասելի դժվարությունների հետ։

Պրոֆ. Ա. Ղարիբյանի երկրորդ մեծ ավանդը հայ բարբառների հնչյունական դասակարգումն է, որի համար հիմք են ծառայել նրա բազմաթիվ ուսումնասիրությունները։

Սակայն բարբառագիտական հետազոտությունները պրոֆ. Ա. Ղարիբյանի մոտ ծառայում են իրրև միջոց՝ լուծելու հայոց լեզվի պատմության հնգեվրոպական լեզուների համեմատական րերականության պրոբլեմները։ Պրոֆ. Ա. Ղարիբյանը զարգացրել է նաև հայ բարբառների ձևաբանական դասակարգումը։ Հետագա ուսումնասիրությունների շնորհիվ հայտնաբերելով բարբառային նոր ճյուղեր («Կա», «Հա», գրաբարակերպ), նա առաջ քաշեց հայերեն բարբառների ձևաբանական նոր դասակարգում (նույն բանը որոշ տարբերությամբ նրանից անկախ տվել է նաև պրոֆ. Աղայանը)։ Ըստ այդ դասակարգման, բարբառների 3 ճյուղ սահմանական եղանակի ներկան կազմում են դերբայով և ռժանդակ բայով, մյուս երեքը՝ մասնիկներով և բայահիմքով։ Բարբառների առաջին խումբը կազմեց դերբայավոր խումբ, երկրորդը՝ մասնիկավոր խումբ։ Դերբայավոր խմբին են պատկանում «Ում», «Լ», «Ս» ճյուղերը, մասնիկավոր խմբին՝ «Կր», «Կա», «Հա» ճյուղերը։ Կա նաև երրորդ խումբ, որին պատկանում են երկու բարբառ, որոնք սահմանական ներկան կազմում են գրաբարակերպ։

Առանձնապես դիտական հետաքրքրություն է ներկայացնում պրոֆ. Ա. Ղարիբյանի առաջադրած նոր տեսությունը հայ բարրապետների ծագման, ինչպես և հնդեվրոպական հայերենի պատմական տեղաշարժերի մասին: «Հայերենի հոլովման զարգացման ներքին երկու օրենքների մասին» (1955), «Հայ բարրապետական հետազոտությունների հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում» («Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1), «Об армянском консонантизме» («Вопросы языкознания» 1959, № 5) աշխատությունները հայոց լեզվի նյութա-համեմատական ուսումնասիրության և հնդեվրոպական լեզուների համեմատական բերականության ասպարեզում նորություն են:

Պրոֆ. Ա. Ղարիբյանն աշխատում է կենդանի բարրապետների հնչյունական օրինաչափությունների միջոցով նպաստել հնդեվրոպական լեզուների համեմատական հնչյունաբանության, հայոց լեզվի պատմական բերականության սրբորվման լուծմանը: Անշուշտ, կան վիճելի դրույթներ նրա առաջ քաշած տեսության մեջ, սակայն ամբողջությամբ վերցրած դա խիզախ ու տրնաջան հետազոտողի ստեղծագործ մտքի արդասիր լինելով, նոր հեռանկարներ է բացում համեմատական լեզվաբանության բնագավառում և մղում անդուլ աշխատանքի:

Բարրապետական ուսումնասիրություններով զբաղվում են նաև տասնյակ հայագետներ:

Առանձին գրքերով հրատարակվել են պրոֆ. Էդ. Աղայանի «Մեղրու բարրապետ» (1954), բանասիրական դիտ. թեկնածու Հ. Մկրտչյանի «Կարնո բարրապետ» (1952), Վ. Պետոյանի «Սասունի բարրապետ» (1954), Ս. Բաղդասարյանի «Մշո բարրապետ» (1957) և այլ հետազոտություններ:

Արդի հայերենի ուսումնասիրությամբ զբաղվել են դեռևս XIX դարի սկզբին: Նախասովետական շրջանի բերականագիտական ամենատարածված աշխատությունները, սակայն, պատկանում են հայ լեզվաբանական մտքի ակադեմիկոս Վ. Պետոյանի, Ստ. Պալաուանյանի և Մանուկ Աբեղյանի գրչին:

Սովետահայ լեզվաբանները իրենց երախտավոր նախորդներից ստացել են գիտական մեծ արժեքներ, որոնք պետք է քննադատաբար օգտագործվեն և հարստացվեն նորանոր հետազոտություններով:

Սովետական կարգերի հաստատման առաջին տասնամյակից սկսած լեզվաբանների նոր սերնդին անհրաժեշտ եղավ տեսական համառ պայքար մղել արդի հայերենի բերականության ֆորմալիստական ուղղության դեմ, որը հասցրել էր բերականության դերի բացարձակ ժխտմանը: Այդ ժամանակ իշխող մտնկարանական կեղծ գիտության պայմաններում բերականության ուսուցումը փաստորեն հանվել էր միջնակարգ դպրոցներից: Անհրաժեշտ էր որոշել և ամրապնդել սովետահայ բերականագիտության հիմունքները: Այս գործում անչափ մեծ են ակադեմիկոս Ա. Ղարիբյանի և Հայկական ՍՍՌ-ի ԳԱ թղթակից-անդամ, պրոֆ. Գ. Սևակի ծառայությունները: Տեսական մի շարք լուրջ հոդվածներից հետո նրանք գրեցին հայոց լեզվի բերականության ձևաբանություն¹, որոնք արդեն քառորդ դար գործածվում են միջնակարգ դպրոցներում: Մրանք ունեն ռչ միայն գործնական, այլև տեսական մեծ նշանակություն, որովհետև մեկնող-միշտ որոշում էին բերականության հիմնական բաժինները (ձևաբանություն և շարահյուսություն), խոսքի մասերն ու նախադասության անդամները՝ ունենալով ամուր հիմք դրանց տարորոշման համար:

Սովետահայ բերականության սկզբունքների մշակման խնդրում վերին աստիճանի կարևոր նշանակություն ունեցավ պրոֆ. Գ. Սևակի «Խոսքի մասերի ուսմունքը» աշխատությունը², որտեղ առաջ պատասխան էր ֆորմալիստական բերականության այն հարձակումներին, որոնք ուղղված էին ընդդեմ խոսքի մասերի և նախադասության անդամների որոշման նոր սկզբունքների: Հեղինակը միաժամանակ ցույց է տալիս, որ բերականության մի շարք ձևաբանությունում «...գոյականը, ածականը, թվականը, բայը, մակբայը որոշվում են իրենց նյութական իմաստի որոշ հաշվառումով, իսկ մնացած խոսքի մասերը և մանավանդ գերանունը, կապն ու շաղկապը

¹ Ա. Ղարիբյան, հայոց լեզվի բերականություն (հնչյունաբանություն, բառագիտություն և ձևաբանություն), 1-ին հրատ., 1934, Գ. Սևակ, հայոց լեզվի շարահյուսություն, 1-ին հրատ., 1936:

² Գ. Սևակ, Խոսքի մասերի ուսմունքը, Երևանի Պետական համալսարանի դիտական աշխատություններ, 1939, հատ. 11.

գործածություններ... Չկա խոսքի մասերի որոշման միասնական սկզբունք, և տարբեր խոսքի մասեր որոշվում են տարբեր սկզբունքներով»¹։

Հիմք ընդունելով «Փիլիսոփայական տետրակներում» Վ. Բ. Լենինի՝ դերանվան մասին տրած սրամիտ և վերին աստիճանի արժեքավոր փոփոխությունները, պրոֆ. Գ. Սևակը կարողանում է մեծ հմտությամբ բացահայտել դերանվան իմացաբանական ու քերականական առանձնահատկությունները և տալ նրա ճիշտ, դիտական սահմանումը։ Հայերենի, ինչպես և աշխարհի բազմաթիվ այլ լեզուների քերականություններում տրագիցիոն ձևով կրկնվում էր դեռևս չին հույների կողմից տրված այն բնորոշումը, թե դերանունը՝ անվանը, այսինքն դոյականին, ածականին և թվականին փոխարինող, նրանց դիրք կատարող խոսքի մաս է։ Որոշ քերականներ, ինչպես, օրինակ, պրոֆ. Ա. Ղարիբյանը, իրավացիորեն ցույց տվեցին, որ դերանունը կարող է փոխարինել նաև մակբային, նույնիսկ մի ամբողջ բառակապակցության կամ նախադասության։ Իերանվան այդ առանձնահատկությունը դեմ ոչ որ չէր առարկում։ Իր ուսումնասիրության մեջ պրոֆ. Գ. Սևակը մատնանշում է, որ դա, սակայն, դերանվան շարահյուսական ֆունկցիան է և չի արտահայտում նրա որպես ինքնուրույն խոսքի մասի առանձնահատկությունները։ Հեղինակը հարուստ փաստերի հիման վրա բացահայտեց դերանվան վերին աստիճանի արտոնական խոսքի մաս լինելը, այն, որ նա ցույց է տալիս «առարկա, հատկանիշ, թիվ և թվական կարգ առանց տարբերակման, իրեն ընդհանուր անուն»։ Հեղինակին միաժամանակ հաջողվեց համոզիչ փաստերով բացահայտել կապի ու շղկապի, այսպես կոչված ձևական խոսքի մասերի իմաստային և քերականական առանձնահատկությունները։ Տեսական այս լուրջ ընդհանրացումներն այժմ ընդունված են սովետական լեզվաբանության մեջ և իրենց պաշտպանությունն են գտնում ռուս ականավոր լեզվաբաններ Վ. Վ. Վինոգրադովի, Ս. Գ. Բուրխուդարովի և ուրիշների աշխատություններում։

Պրոֆ. Գ. Սևակի «խոսքի մասերի ուսմունքի» ամենախոշոր նշանակությունն այն է, որ այդտեղ առաջադրվում են հիմնական սկզբունքներ ինչպես բոլոր խոսքի մասերի, այնպես և նախադասության անդամների որոշման համար։ Հեղինակն առաջարկում է խոսքի մասերը որոշել ըստ բառի արտահայտած իմաստի, իսկ նախադասության անդամները՝ ըստ նախադասության մեջ բառի կատարած պաշտոնի։ Պետք է ասել, որ այս սկզբունքով էլ մեծ մասամբ դրվում են արդյո՞ք քերականական աշխատություններն ու, մանավանդ, դպրոցական դասագրքերը։

«Խոսքի մասերի ուսմունքում» արտահայտած տեսական առողջ եզրահանգումներն իրենց զործնական լուծումն են ստանում հեղինակի «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» (1939) և այլ աշխատություններում։

Արդի հայերենի գիտական ուսումնասիրության մեջ իր ուրույն տեղն ունի մեծ լեզվաբան Մ. Արեղյանի «Հայոց լեզվի տեսությունը», որը լույս է տեսել 1931 թվականին։ Հեղինակը սկզբունքային մի շարք հարցերում նույնությամբ պահպանում է նախասովետական շրջանի իր սխալ կարծիքները, որոնք շատ որոշակիորեն ցույց էին տալիս նրա հայացքների նույնությունը երիտերականների կամ այլ կերպ կոչված հոգեբանական դպրոցի ներկայացուցիչների հետ։ Այսպես, օրինակ, այս աշխատության մեջ նա մեծ տեղ տալով խոսելու հոգեբանական ակտին՝ դալիս է այն եզրակացության, թե անհատների լեզուները խիստ կերպով տարբերվում են իրարից։ «Այնպես, որ կարելի է ասել, թե կան միայն մեկատեսակ լեզուներ» և ոչ թե համաժողովրդական լեզուներ։ Մ. Արեղյանն ապա դարձացնում է բայի գերազանցության տեսությունը՝ բայը նույնացնելով խոսքի կամ նախադասության հետ։ Այստեղ հեղինակը կրկնում է չլուրջների որոշման նախկին սխալը. խառնում է խոսքի մասերն ու նախադասության անդամները։ Մակայն, չնայած այս ելակետային սխալներին, Մ. Արեղյանի «Հայոց լեզվի տեսությունը» մեծ ավանդ է հայ լեզվաբանական գրականության մեջ։ Վերին աստիճանի հետաքրքրական են հեղինակի ճիշտ մտքերը բառարմատների և քերականական կառուցվածքի կայունության ու դիմադրողական մեծ ուժի մասին։ Նա մերժում է լեզվի մեջ որակական փոփոխությունների թռիչքային զարգացման «տեսությունը» և գտնում, որ այդ փոփոխությունները տեղի են ունենում աստիճանաբար, և վերջույցից ձևապարզում։ Մ. Արեղյանի «Հայոց լեզվի տեսություն» մեջ խորքնություն է ենթարկվում հայերենի հնչյունային կազմը, տրվում է հնչյունների գիտական դասակարգումը։ Մեծ արժեք են ներկայացնում բառային կազմի և, մասնավորապես, կապերի ու նրա խնդրառությանը վերաբերող դրույթները։

¹ Գ. Սևակ, խոսքի մասերի ուսմունքը, Երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», 1939, հատ. 11, էջ 198—199։

Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 41։

Հետագայում հայերենի հնչյունաբանության և բառային կազմի մասին լույս են տեսել մի շարք արժեքավոր աշխատություններ, որոնցից առավել աչքի են կենդանանում Լ. Առաքելյանի «Ժամանակակից հայերենի հնչյունաբանությունը» (1955), «Ավ. Խաչակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները» (1954) և Ս. Ղազարյանի «Ժամանակակից հայոց լեզուն և ուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ» (1955) և այլն:

Տարիներ շարունակ Պետական համալսարանի և մանկավարժական բուհերի մասնագիտական ֆակուլտետների համար հայոց լեզվի տեսության դասագրքեր են ծառայում Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» (1939) և «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» (1955) աշխատությունները: Հեղինակը տալիս է ժամանակակից հայոց լեզվի կազմավորման համառոտ պատմությունը, ապա անցնում հայերենի հնչյունաբանության, բառագիտության և ձևաբանության հարցերին: Հետաքրքրական են հեղինակի նույն դիտողությունները հնչյունի և հնչույթի, ձևի և ձևույթի մասին: Այս աշխատություններում ևս պրոֆ. Գ. Սևակը քննարկում է խոսքի մասերի որոշման հիմունքները և գիտական ճիշտ դիրքերից ուսումնասիրում դերանունը, ինչպես և «ձևական խոսքի մասերը» (կապ, շաղկապ):

Վերջին տասնամյակում լույս են տեսել սովետահայ լեզվաբանների մի շարք մենագրություններ, որոնք լրացնում են ժամանակակից հայոց լեզվի գիտական, ակադեմիական քերականության պակասը: Այս առումով հիշատակության արժանի է շնորհալի լեզվաբան Աշոտ Արրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» խորագրով աշխատությունը: Հեղինակը նախ տալիս է պատմական տեսություն հայերենի դերբայների մասին, ապա դերբայները քննարկում ձևաբանական, բառակազմական և իմաստաբանական առումներով՝ օգտագործելով գրաբարի, միջին հայերենի բարբառների և արդի հայերենի փաստական հարուստ նյութը:

Իր պրպտող մտքով և փաստասիրությամբ Աշոտ Արրահամյանը շարունակում է հայոց լեզվի մեծ մշակներ Հր. Աճառյանի և Մ. Արևիկյանի ճանապարհը: Նրա աշխատությունը փայլում է համարձակ եզրահանգումներով, նույն դիտողություններով, որոնց շարունակ ուղեկցում են լեզվական հարուստ և բազմակողմանի փաստեր:

Հայերենի դերբայների ուսումնասիրության մեջ նախ և առաջ մեծ է պրոֆ. Մ. Արևիկյանի վաստակը: Հայ քերականագետներից առաջինը նրան հաջողվեց վեր հանել մայրենի լեզվի դերբայական հիմնական ձևերը, գիտական տերմիններ ստեղծել նրանց համար և, որ ամենակարևորն է, ցույց տալ դերբայների դերը բայերի խոնարհման սխեմայում: Այնուհետև պրոֆ. Ա. Ղարիբյանը բացահայտեց մի նշր դերբայական ձև, որը սկզբնապես կոչեց ըղձական, ապա՝ ժխտական կամ ժխտման: Այս դերբայն ընդունվեց մեծ պայքարով, որովհետև գա որոշ լեզվաբաններ սխալմամբ շփոթում էին ըղձական եղանակի եզակի երրորդ դեմքի հետ (խոսեմ, խոսես, խոսի. ժխտման դերբայ՝ խոսի): Պրոֆ. Ա. Ղարիբյանը ցույց տվեց, որ ժխտման դերբայը ինքնուրույն ձև է, որից կազմվում են պայմանական եղանակի ժխտական ձևերը (չեմ խոսի, չես խոսի, չի խոսի. չիիր խոսի, չիր խոսի և այլն):

Պոցենտ Աշոտ Արրահամյանին հաջողվել է ի հայտ բերել և հաստատել գիտական քերականության մեջ դերբայական մի այլ ձև՝ ընթացակցական դերբայը, որը ծագել է անորոշ դերբայի բացառական հոլովից (առկայծեն, զնպլեն) և ցույց է տալիս բայի դիմավոր ձևի արտահայտած գործողությանը կամ եղելությանը գուգահեռ գործողություն. օրինակ՝ պիտի անցնիմ թափառելեն: Պետք է ասել, որ այս դերբայը ավելի վաղ դիտել է պրոֆ. Էգ. Աղայանը «Փննություն Մեղրու բարբառի» աշխատության մեջ և կոչել «մակրայական դերբայ»:

Նկատվում է, որ պոցենտ Ա. Արրահամյանը խորապես ուսումնասիրում է ոչ միայն հայերենի դերբայները, այլև բայը ընդհանրապես: Այդ է վկայում նրա հետաքրքիր աշխատանքը բայերի կրկնասեռության մասին¹: Բայի սեռի մասին արժեքավոր ուսումնասիրություն է հրապարակել Երիտասարդ լեզվաբան Մ. Ասատրյանը²:

¹ Ա. Ա. Արրահամյան, «Ժամանակակից հայերենի կրկնասեռության երևույթի շուրջը», ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 3:

² Մ. Ա. Ասատրյան, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևանի Պետական համալսարանի Հրատարակչություն, 1959:

Բայի մասին համեմատաբար ամփոփ և ամբողջական ուսումնասիրություն է հանդիսանում Հովհ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսությունը» (1953)։ Հեղինակը մի շարք հետաքրքրական դիտողություններ ունի բայի սեռի, ածանցավոր բայերի խոնարհման և այլ հարցերի մասին։

Ինչպես արդեն նշվել է, լեզվաբանական դրականության մեջ երկար ժամանակ ճիշտ չի որոշվել դերանունը։ Այդ կապակցությամբ պրոֆ. Գ. Սևակի կարևոր ուսումնասիրություններից հետո խիստ արժեքավոր է նաև բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Աբրահամյանի «Արդի հայերենի դերանունները» խորագրով աշխատությունը, որ լույս է ընծայել Հայկական ՍՍԻ ԳԱ Հրատարակչությունը 1956 թվականին։ Հեղինակը ճիշտ դիրքերից է որոշում այդ խոսքի մասը և բացահայտում նրա իմաստային ու քերականական առանձնահատկությունները։ Հիշատակության արժանի է նաև հեղինակի նոր աշխատությունը՝ հայերենի շթեքվող խոսքի մասերի վերաբերյալ (մակբայ, եղանակավորող բառեր, կապ, շաղկապ և ձայնարկություն)։ Ս. Աբրահամյանը միանգամայն իրավացի կերպով առանձին խոսքի մաս է համարում եղանակավորող բառերը, որոնք մինչև վերջերս էլ շատ քերականների մոտ արհեստականորեն դասվում էին մակբայների շարքը։ Պետք է ասել, որ մինչև այդ եղանակավորող բառերը մակբայների շարքում առանձնացվել էին դեռևս Մ. Աբեղյանի և Ա. Ղարիբյանի աշխատություններում, իսկ Ա. Աբրահամյանը իր «Դրաբարի ձևաբանություն» այդ բառերը դիտում է իբրև անկախ, ինքնուրույն խոսքի մաս։

Ժամանակակից հայոց լեզվի կապերի մասին ուշագրավ ուսումնասիրություն ունի բանասիրական գիտությունների թեկնածու Ալ. Մարդարյանը²։ Կապերի մասին ընդարձակ ուսումնասիրություն կա նաև Վ. Առաքելյանի «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» (1957) աշխատության մեջ։

Ժամանակակից հայոց լեզվի գիտական ուսումնասիրման գործում մեծ վաստակ ունի դոցենտ Վարդգ Առաքելյանը։ Նրա բեղմնավոր գրչին են պատկանում մի շարք մեծարժեք աշխատություններ հայերենի հնչյունաբանության, բառագիտության և քերականական կառուցվածքի մասին։ Սակայն, մեր կարծիքով, ամենից շնորհակալ գործը, որ կատարել է Վ. Առաքելյանը, ժամանակակից հայերենի գիտական շարահյուսության հարցերի մշակումն է։ Արդեն հրապարակի վրա է նրա «Հայերենի շարահյուսություն» (1958) սովորածավալ աշխատության առաջին հատորը, որն ընդգրկում է պարզ նախադասության շարահյուսությունը։ Հրատարակության է պատրաստվում աշխատության երկրորդ հատորը, որը պետք է ընդգրկի բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների շարահյուսության հարցերը։

Պրոֆ. Մ. Աբեղյանի «Աշխարհագրի շարահյուսությունից» և պրոֆ. Գ. Սևակի որոշ ուսումնասիրություններից հետո դոցենտ Վ. Առաքելյանի աշխատությունը ժամանակակից հայոց լեզվի շարահյուսության խոր և հանգամանալից վերլուծությունն է։ Չնայած որոշ վիճելի դրույթներին ու վրիպումներին, որոնք անխուսափելի էին այսպիսի մեծ գործի համար, Վ. Առաքելյանի «Հայերենի շարահյուսությունը» ուղղունի նորություն է մեր լեզվաբանական գրականության մեջ։

Գիտական մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ ու հոդվածներ են տպագրվել Հայկական ՍՍԻ ԳԱ «Տեղեկագրում», «Պատմա-բանասիրական հանդեսում», «Սովետական մանկավարժ» ամսագրում և զանազան մոլոլվածներում, որոնց մասին հնարավոր չէ խոսել մի հոդվածի մեջ։ Այնուամենայնիվ, այս բոլորը վկայում են, որ Սովետական իշխանության քառասուն տարիների ընթացքում համակողմանիորեն մշակվել են ժամանակակից հայոց լեզվի տեսության հարցերը։ Սրանք ամուր հիմք են հանդիսացել գործնական, դպրոցական քերականությունների և մեթոդական-մանկավարժական դրականության համար։

Ի պատիվ սովետահայ լեզվաբանների պետք է ասել, որ աշակերտությունն ստացել է ինչպես ձևաբանության, այնպես և շարահյուսության կայուն դասագրքեր, որոնք քանհինգ տարի է արդեն հիանալի քննություն են բռնում։

Այս գործում զգալի է եռանդուն լեզվաբան պրոֆ. Ա. Ղարիբյանի վաստակը։ Դեռևս փոքրիկ քերականության դեմ տարվող ուժեղ պայքարի շրջանում, 1934 թվականին հրատարակելով իր քերականության դասագիրքը, նա իրեն հատուկ կրթությունը պաշտպանեց սովետական լեզվաբանության դիրքերը, կարողացավ ճիշտ որոշել լեզվի ուսուցման սահմանները,

¹ Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շթեքվող խոսքի մասերը, Հայկական ՍՍԻ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1959։

² Ալ. Մարդարյան, Արդի հայերենի կապերը, Երևան, 1955։

քերականության հիմնական բաժինները: Կարելի է համարձակ ասել, որ աշակերտների և ուսանողների մի քանի սերունդներ հայոց լեզու են սովորել պրոֆ. Լ. Ղարիբյանի դասագրքով, և այժմ այնքան սովորական են դարձել հայերենի հնչյունային կազմի, բառակազմության մասին գիտելիքները, խոսքի մասերին տրված սահմանումներն ու բացատրությունները, որ հաճախ մոռացվում է, թե ինչ մեծ ջանքեր և ուժերի ինչպիսի լարում է գործադրել հեղինակը այդ բոլորը այնքան սովորական ու պարզ դարձնելու համար: Եւ խիստ դժվար ձեռք բերվող պարզություն է: Կարելի է բերել մի հասարակ օրինակ. հայտնի է, որ ֆորմալիստական քերականության ներկայացուցիչները ձևաբանությունից հանել էին սեռական և հայցական հոլովները, պատճառաբանելով, թե նրանք չունեն ինքնուրույն ձև, ուրեմն և ինքնուրույն հոլովներ չեն: Իր դասագրքում Լ. Ղարիբյանը ոչ միայն պիտի ճշտեր հոլովի հասկացությունը, այն, որ նա ձևի և բովանդակության միասնություն է, ոչ միայն պիտի վերականգներ սեռական և հայցական հոլովները, այլև պիտի մեթոդական հարմար միջոցներ գտներ հոլովների ուսուցման համար: Հեղինակը համարձակ բայի դիմեց՝ ձևաբանությունն անցնելուց առաջ աշակերտներին հաղորդելով համառոտ գիտելիքներ շարահյուսության, մասնավորապես նախադասության գլխավոր և երկրորդական անդամների մասին: Լեզու դասագրքում վերականգնվեց ենթական ու ստորոգյալը միասնաբար իրեն նախադասության գլխավոր անդամներ բնորոշելու սկզբունքը: Լեզու ամենի համար պետք էր ոչ միայն լեզվաբանի, այլև մանկավարժի հմտություն:

Գրել շարահյուսության դասագիրք միջնակարգ դպրոցների համար գուցե այժմ թվա առանձնապես ոչ դժվարին գործ: Բայց 30-ական թվականներին, երբ հրապարակի վրա էր միայն պրոֆ. Մ. Լեբեդյանի «Լեխարհարարի շարահյուսությունը», դա կապված էր մեծ դժվարությունների հետ: Լեմենահիմնական դժվարությունն այն էր, որ Մ. Լեբեդյանի, ինչպես և ուսական ու եվրոպական շատ լեզվաբանների մոտ խառնվում էին խոսքի մասերն ու նախադասության անդամները, ձևաբանության և շարահյուսության սահմանները, ստուգապես չէին որոշված ենթակայի և ստորոգյալի լրացումները, ավելին՝ շատերի կողմից նախադասության գլխավոր անդամ էր համարվում բայ-ստորոգյալը, իսկ նրա լրացումներ՝ ենթական, խնդիրներն ու պարագաները: Լեզուպիսի պայմաններում մշակել պարզ և բարդ նախադասության շարահյուսությունը, հստակորեն որոշել նախադասության գլխավոր անդամներն ու նրանց լրացումները և զանազան այլ հարցեր, իրոք մեծ և արժեքավոր գործ էր, սա պատիվ է բերում միջնակարգ դպրոցների շարահյուսության դասագրքի հեղինակ պրոֆ. Գուրգեն Սևակին:

Սովետահայ լեզվաբաններն օգնել են հայոց լեզվի ուսուցիչներին նաև մեթոդապես: Տարիներ շարունակ ուսուցչի սեղանի դիրք է ծառայում պրոֆ. Լ. Ղարիբյանի «Հայոց լեզվի դասականգման մեթոդիկան» (1954): Սա ոչ միայն մեթոդական, այլև տեսական լուրջ աշխատություն է:

Վերջին տարիներս մեթոդական դրականությունը հարստացել է Լ. Լեբրահամյանի, Ս. Լեբրահամյանի, Տ. Շահրազյանի Գ. Ներսիսյանի, Ռ. Բաղրամյանի, Լ. Պողոսյանի, Ս. Գյուլբուրդյանի, Թ. Զուհարյանի, Լ. Լեմիլյանի և շատ ուրիշների արժեքավոր ուսումնասիրություններով:

Հարուստ պատմություն ունի հայ բառարանագրությունը: Դեռևս XVII—XVIII դարերից սկսած զրվել են ինչպես երկլեզվյան, բազմալեզվյան թարգմանական, այնպես էլ հայերենի բացատրական, գավառական բառարաններ: Հայագիտության խոշոր կոթողներից են Մխիթար Սևրուստացու «Բառգիրք Հայկապյան լեզվի» (1749—1769), «Առձեռն բառարան Հայկապյան լեզվի» (1846—1865), Ս. Լեմատունու «Հայոց բառ ու բան» (1912), Հ. Լեւոնյանի «Հայերեն գավառական բառարան» (1913), Մ. Զախչախյանի «Բառգիրք ի բարբառ հայ և իտալական» (1837), Հ. Դադրաշյանի «Լիակատար բառարան հայերենից ռուսերեն» (1911) և այլ գրքեր:

Սակայն հայ բառարանագրության ծաղկումը կապված է սովետական հայագիտության զարգացման հետ: Հայ ժողովրդի պետականության վերականգնման շնորհիվ պետական լեզու դարձած հայերենի համար անհրաժեշտ եղավ ստեղծել հասարակական-քաղաքական կյանքի, գիտության, տեխնիկայի բոլոր բնագավառներին վերաբերող տերմինների բառարաններ: Կարճ ժամանակում հրատարակվեցին իրավաբանական, երկաթուղային, առևտրա-հաշվապահական, շինարարական կառուցվածքների, ռազմական-բժշկագիտական, անատոմիական, բուսաբանա-

կան և այլ տերմինների ուսու-հայերեն բառարաններ: Դրանք են՝ «Ռուս-հայերեն իրավաբանական բառարան» (1924), Մ. Արեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարան» (1925), «Ներկաթուղային տերմինների ուսու-հայերեն բառարան» (1926—1927), Վ. Փոթիյանի «Ռուս-հայերեն աշխատանքային բառարան» (1931), «Անատոմիական տերմինաբանական բառարան» (1934), «Նեվրաբանական տերմիններ, ուսու-հայերեն բառարան» (1936), Վ. Արծրունու «Ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարան» (1956), «Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների» (1928), Մ. Տեր-Հովհաննիսյանի «Առևտրա-հաշվապահական տերմինների համառոտ ուսու-հայերեն բառարան», «Ռուս-հայերեն բուսաբանական տերմինների բառարան» (1941):

Սակայն մասնագիտական տերմինների բառարանները չէին կարող լրացնել այն կարիքը, որ առաջ էր եկել բուռն թափով աճող Հայաստանի կուլտուրայի ու գիտության վերելքի պահանջով: Ռուս և համաշխարհային առաջավոր գիտության, կուլտուրայի, գրականության նվաճումների նկատմամբ օրավուր աճող հետաքրքրությունը դրգում էր ունենալ ուսու-հայերեն ավելի կատարյալ, ժամանակի պահանջներին համապատասխանող, սովետական իրականության մեջ ստեղծված նոր հասկացություններն արտացոլող բառարան: Դադրաշյանի բառարանն այս տեսակետից հնացել էր: Այդ պատճառով էլ 1933—1935 թթ. հրատարակվում է «Ռուս-հայերեն նոր բառարան» (հեղինակային կոլեկտիվ). որն ընդգրկում էր 80 000 բառ և դարձվածք: Սակայն կարճ ժամանակում բառային կազմի մեջ տեղի էին ունեցել հսկայական փոփոխություններ: Ուստի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտը ձեռնամուխ եղավ ստեղծելու ուսու-հայերեն հարուստ բառարան: Այդ ջանքերը պսակվեցին հաջողությամբ, 1954—1958 թթ. լույս տեսավ Ռուս-հայերեն բառահատոր բառարանը («Ռուս հայերեն բառարան», 1-ին հ.՝ 1954 թ., 2-րդ հ.՝ 1956 թ., 3-րդ հ.՝ 1957 թ., 4-րդ հ.՝ 1958 թ.), որն արտացոլում է ոչ միայն ուսու-հայերենի բառային կազմի հարստությունը, այլև հայոց լեզվի՝ սովետական շրջանում ունեցած հսկայական աճը: Բառարանը պարունակում է 100 000-ից ավելի բառ, ինչպես նաև ունի օտարազգի տարածված դարձվածքների համառոտ բառարան: Ստեղծվել են նաև հայ-ուսու-հայերեն բառարաններ, որոնցից աչքի է ընկնում Ա. Ղարիբյանի, Ե. Տեր-Սինասյանի, Մ. Գևորգյանի կազմած «Հայ-ուսու-հայերեն բառարանը», որը պարունակում է 28 000 բառ (1947): Սա հրատարակված է առաջին հերթին նպաստելու հայ աշակերտների և ուսանողության կողմից ուսու-հայ լեզուն յուրացնելու գործին:

Սովետական շրջանում հնարավոր դարձավ հրատարակելու այնպիսի բառարաններ, ինչպիսիք են Հ. Աճառյանի «Արմատական բառարանը» և Սա. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» (1944—1946): Սրանցից առաջինի մասին խոսվել է արդեն: «Հայերեն բացատրական բառարանը», որն արժանացել է Ստալինյան մրցանակի, հեղինակի մի քանի տասնամյակի քրտնաջան աշխատանքի արդյունքն է: Դա պարունակում է գրաբարի, միջին հայերենի, աշխարհագրի և բարբառների շուրջ 120 000 բառեր, չնրանց ծագման ստուգաբանական, բառակազմական, ոճաբանական, քերականական և արտասանական բացատրություններով հանդերձ: Դա ամենախոշոր բառարանն է հայագիտության ողջ պատմության ընթացքում, որտեղ ամփոփված են մինչև սովետական շրջանը գործածված բոլոր բառերը: Սակայն այդտեղ լրիվ չի արտացոլված բառային այն հարստությունը, որն ստեղծված է սովետական շրջանում: Այդ է պատճառը, որ ԳԱ Լեզվի ինստիտուտը մի քանի տարի առաջ ձեռնարկել է արդի հայերենի բացատրական բառարան կազմելու աշխատանքին, և մոտ ապագայում հրապարակ կգա այդ բառարանը, որը Սա. Մալխասյանցի բառարանի հետ միասին կներկայացնի բազմադարյան հարուստ պատմություն ունեցող զարգացած հայոց լեզվի ողջ բառազանձը:

Սովետահայ լեզվաբանության աչքի ընկնող նվաճումներից մեկն էլ անցյալի գիտական ժառանգության գնահատման վերաբերյալ ստեղծված աշխատություններն են:

Պրոֆ. Գ. Զահուկյանի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» (1954) ուշագրավ գիրքը ընդարձակ ուսումնասիրություն է նվիրված հայ քերականագիտության պատմությանը V դարից մինչև XV դարը: Մեծ է այդ աշխատության գիտական արժեքը ոչ միայն նրանով, որ հայոց լեզվի ուսումնասիրությանը նվիրված համարյա ոչ մի՝ քիչ թե շատ նշանակալից երկ դուրս չի մնացել տեսադաշտից և անցել է լեզվաբանական արդի տեսությանը գինված հետազոտողի քննության բովով, այլև նրանով, որ բնության ենթարկված աղբյուրները հիմնականում գտնվում են ձեռագիր վիճակում և հասանալիությունը մատչելի չեն:

Հայ լեզվաբանության շուրջ տասնհինգ դարերի պատմությանն է նվիրված Հայկական ՍՍՌ թղթակից-անդամ պրոֆ. Էդ. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատու-

թյունը, որի 1-ին հատորն է հրատարակվել (1958)։ Լեզվի ու լեզվաբանության վերաբերյալ բոլոր հին ու նոր տեսությունները քննարկված են այդ աշխատության մեջ։ Գիրքը կարևոր է նաև նրանով, որ այնտեղ հայ լեզվաբանության պատմությունը դիտված է իրրև համաշխարհային գիտության մի բաղադրիչ։

Լեզվաբանության պատմությունից բացի, սովետական շրջանում հրապարակ են եկել ընդհանուր լեզվաբանության գասրնթացներ և առանձին հարցերի վերաբերյալ մենագրություններ։ Լեզվաբանության առաջին գասրնթացը պատկանում է հանգուցյալ ակադ. Գ. Ղափանցյանին (1939)։ Սակայն ժամանակի ընթացքում լեզվաբանական գիտության զարգացման արդի պահանջները բավարարելու համար հարկ եղավ ստեղծելու նոր գասրնթաց։ 1947 թ. լույս տեսավ պրոֆ. էդ. Աղայանի «Լեզվաբանության ներածություն» գիրքը, որը երկրորդ հրատարակությունից հետո չիմնովին վերակառուցվեց և 1952 թ. հրատարակվեց ավելի մեծ ծավալով։ Դա Սովետական Միության մեջ առաջին լեզվաբանական ձեռնարկն էր դիսկուսիայից հետո և գրված է գիտական բարձր մակարդակով, սովետական լեզվաբանության նվաճումների ոգով։

ХVІ—ХХ դարերի նշանավոր բերականագետների և լեզվաբանների ժառանգության վերհանմանն ու գնահատմանն են նվիրված նաև Ա. Ղարիբյանի, Գ. Սևակի, Գ. Զահուկյանի, Ա. Աբրահամյանի մի շարք հոդվածներն ու աշխատությունները։

Քառասուն տարի, մի ակնթարթ մարդկային պատմության հազարամյակների ընթացքում։ Չորս տասնամյակ, սակայն որքան արգասաբեր է եղել նա մեր փորրիկ, բայց տաղանդավոր ժողովրդի կյանքում։ ՍՍՄՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում ծաղկել է հնամենի Հայոց աշխարհը, աննախընթաց նվաճումներ են ձեռք բերվել ժողովրդական տնտեսության, կուլտուրայի, արվեստի և գիտության բոլոր բնագավառներում։ Մի հոգվածի սահմաններում անհնար է ցույց տալ այն իրապես վիթխարի նվաճումները, որ ձեռք է բերել սովետահայ լեզվաբանությունը 40 տարում։ Սակայն այդ նվաճումների համառոտ թվարկումն անգամ ցույց է տալիս, թե ինչ վիթխարի գործերի է ունակ Հենինյան պայծառ դրուշի ներքո ստեղծագործող ժողովուրդը։ Օրինական հպարտության զգացումով կարելի է ասել, որ սովետահայ լեզվաբանները պատվով են շարունակում իրենց մեծ նախորդների, աշխարհահռչակ լեզվաբաններ Հր. Աճառյանի, Մ. Արևիկյանի, Ս. Մալխասյանցի, Գ. Ղափանցյանի և շատ այլ գիտնականների տրագիկաները՝ առաջնորդվելով մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ ուսմունքով։ Մաղկում է սովետահայ լեզվաբանությունը։

АРМЯНСКОЕ СОВЕТСКОЕ ЯЗЫКОЗНАНИЕ ЗА 40 ЛЕТ

Б. А. ВЕРДЯН, В. А. КОСЯН

(Р е з ю м е)

Арменистика имеет многовековую историю. Начиная с V в. н. э. был переведен ряд грамматических трудов древней Греции, создавались ценнейшие толкования грамматических учений. Арменистика и армянское языкознание особенно развивались в XIX в. Появились такие выдающиеся арменисты, как Петерман, Виндишман, Гюбшман, Мейе, К. Патканян, А. Айтынян, Паласанян и др.

Пережив богатый опыт в области изучения армянского языка, советские лингвисты в течение 40 лет подняли на новую высокую ступень науку о языке. Достаточно упомянуть, что в период советской власти были созданы ценнейшие труды выдающихся армянских лингвистов Р. Ачаряна, М. Абеяна и Г. Капанцяна. Большим вкладом в языкознание является семитомный «Корневой словарь» акад. Р. Ачаряна, где даны происхождение и семантика около 11 тысяч корней и корнеслов. В статье оценен также ряд других трудов покойного академика («История армянского языка», «Полная грамматика армянского языка» и др.). В ней указаны достижения армянских советских лингвистов в области сравнительного изучения исторических связей армянского и древнемалоазийских, кавказских (в частности грузинского) языков. В этой области неопценимы труды акад. Г. Капанцяна («Хаяса — колыбель армян», «Chetto-armeniaca» и др.).

За годы Советской власти армянские лингвисты добились больших успехов в области изучения современного армянского языка. Вслед за «Теорией армянского языка» и другими ценными исследованиями акад. М. Абегамяна появились грамматики акад. А. Гарибяна и члена-корреспондента АН Армянской ССР Г. Севака; эти труды более чем четверть века являются стабильными учебниками средних школ. Бесспорны заслуги указанных авторов в обработке принципов классификации частей речи, членов предложения и ряда других важных вопросов грамматики. За последние два десятилетия выросло целое поколение советских армянских лингвистов (член-корреспондент АН Армянской ССР Эд. Агаян, профессора С. Казарян, Г. Джаукян, доценты А. Абрамян, В. Аракелян и др.).

За 40 лет был издан ряд словарей: многотомный «Корневой словарь», «Словарь армянских имен» акад. Р. Ачаряна, четырехтомный «Толковый словарь» акад. Ст. Малхасянца, «Русско-армянский словарь» (под редакцией Г. Капанцяна и А. Гарибяна) и т. д. Ныне готовятся многотомный толковый словарь современного армянского языка и словарь синонимов.

Армянский язык богат диалектами. Армянские советские лингвисты с большой энергией взялись за изучение этого богатого и неисчерпаемого материала. Акад. Р. Ачаряном была дана морфологическая классификация армянских диалектов; вслед за ним акад. А. Гарибян предложил фонетическую классификацию. Ценные исследования по диалектологии имеют проф. Эд. Агаян, кандидаты филологических наук А. Мкртчян, Р. Баграмян, А. Погосян и другие. Эти труды дают много ценного для исследования истории армянского языка и для исторического изучения индоевропейских языков вообще.